


*St. Mesrob Armenian Apostolic Church*

*4605 Erie Street, Racine, Wisconsin 53402*

414-639-0531

Ս. ՄԵՍՐՈՊ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

**Reverend Father Garabed Kochakian, Pastor**

*Տ. Կարապետ Քահանայ Քոչաքեան – Հովիւ*


23 Փետրուար 1987

Գերաշնոր
Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Այսու կուզանք յայտնել Ձերդ Սրբազանութեան թէ Եկեղեցւոյս տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ կիրակի 1 Փետրուար 1987 Սուրբ Պատարագի մատուցման անմիջապէս յետոյ 77 անդամներու ներկայութեան: Քուէարկութեամբ 77 տրատու անդամներ մասնակցեցան: Եկեղեցւոյս անդամներու թիւն է 226:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը Ծխական խորհուրդին, Ընտրողական Յանձնախումբին ու Հաշուեքննիչ Յանձնախումբին: Ծխական Խորհուրդին նորընտիր անդամներ են Սարգիս Ջերքինեան,
4 Մայքըլ Զարտուքեան, Հէրի Աքկուլեան եւ Սարգիս Գաբրիէլեան:

Համաձայն Ձերդ 31 Հոկտեմբեր 1986-ի թուակիր նամակը, ներփակ կը գտնէք Սուրբ Մեսրոպ Հայց Եկեղեցւոյս տարեկան տեղեկագիրներու պրակը ինչպէս նաեւ Ծխական Ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց քուէրրկութէն օրինակ մը թեկնածուներու անուններով, հասցէններով եւ հեռաձայնի թիւեր, Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրերը անհրաժեշտ ստորագրութիւններով, Ծխական Ժողովի ատենագրութիւնք, ծխական ներկայացուած ելեւմըտական հաշուեկշիռը եւ անդամներու ղրկուած հրաւիրագրէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւններ Ձերդ բարձր նկատողութեան կը սպասենք Ծխական Խորհուրդի ընտրութեան վաւերացման:

Մնամ խոնարհաբար աղօթակից
ի դիմաց Ծխական Ժողովի

Տէր Կարապետ Քհնյ. Քոչաքեան

Տէր Կարապետ Քահանայ Քոչաքեան
Նախագահ եւ Հովիւ